

**«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվություններ**

**2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտված  
տաս ամիս ժամանակաշրջանի համար**

## **Բովանդակություն**

<b>Տնօրենների խորհրդի կազմը</b>	<b>1</b>
<b>Հաշվետվություն տնօրենների պատասխանատվությունների վերաբերյալ</b>	<b>2</b>
<b>Անկախ աուդիտորական հաշվետվություն</b>	<b>3</b>
<b>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>	<b>4</b>
<b>Հաշվապահական հաշվեկշիռ</b>	<b>5</b>
<b>Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն</b>	<b>6</b>
<b>Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն</b>	<b>7</b>
<b>Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ</b>	<b>8-37</b>

## **Ծանուցում**

Կից հայերենով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական հաշվետվությունը թարգմանվել են հայ ընթերցողի համար, սակայն վերջիններիս բնօրինակը անգլերեն տարբերակն է: Հայերեն և անգլերեն տարբերակները մեկնաբանելիս առաջացած տարբերությունների դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

**«Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ**

Հայաստանի Հանրապետություն

Երևան

Վ. Սարգսյանի 6/2

## **Տնօրենների խորհրդի կազմը**

Կարեն Սաֆարյան	- Խորհրդի նախագահ
Խաչատուր Զաքարյան	- Խորհրդի նախագահի տեղակալ
Ալեքսեյ Չերվոնի	- Խորհրդի անդամ
Վլաչեսլավ Բորիսով	- Խորհրդի անդամ
Վալերի Տյուկալով	- Խորհրդի անդամ

## **Հաշվետվություն տնօրենների պատասխանատվությունների վերաբերյալ**

Տնօրենները պատասխանատու են յուրաքանչյուր ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների կազմման համար, որոնք ճշմարիտ և արդարացի ներկայացնում են «Արդշինհնվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») ֆինանսական վիճակը և գործունեության ֆինանսական արդյունքներն այդ ժամանակաշրջանի համար: Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս տնօրեններից պահանջվում է՝

- բացահայտել համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառման փաստը,
- ընտրել հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականություն և հետևողականորեն կիրառել այն,
- ընդունել ողջամիտ և հաշվենկատ որոշումներ ու գնահատականներ,
- ֆինանսական հաշվետվությունները կազմել, ելնելով անընդհատության սկզբունքից, քանի դեռ չկան հիմքեր դիտարկելու Բանկի գործունեության դադարեցման հնարավորությունը:

Տնօրենները պատասխանատու են հաշվապահական հաշվառման գրանցումների պատշաճ իրականացման համար, որոնք ողջամիտ ճշգրտությամբ կարտացոլեն Բանկի ֆինանսական վիճակը և հնարավորություն կրնձեռեն տնօրեններին ապահովելու ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին: Տնօրենները պարտավոր են իրականացնել Բանկի միջոցների պահպանությանը, կեղծիքների ու խախտումների բացահայտմանը և կանխմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:



**«Քեյ-Փի-Էն-Ջի» Արմենիա ՓԲԸ**

Հայաստանի Հանրապետություն  
Երևան, 375010,  
Հանրապետության 8

Հեռ/Ֆաքս  
Էլ-փոստ:


+374(1) 566 762  
general@kpmg.co.am

**Անկախ աուդիտորական հաշվետվություն**

«Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ-ի  
Տնօրենների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ-ի («Բանկ») հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2003թ., ինչպես նաև ստորև ներկայացված 2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տաս ամիս ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: 4-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից հրատարակված Աուդիտորական միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը թեսային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:




KPMG Armenia cjsc, a company registered under the Law of the Republic of Armenia, is a member of KPMG International, a Swiss cooperative.




**«Արդշինհնվեստրանկ» ՓԲԸ**  
 Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն  
 2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տաս ամիս ժամանակաշրջանի համար

	Ծնթգ.	<u>2003թ. հազ. դրամ</u>
Տոկոսային եկամուտ	4	1,263,809
Տոկոսային ծախս	4	<u>(310,458)</u>
<b>Չուտ տոկոսային եկամուտ</b>		953,351
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	524,635
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		<u>(29,473)</u>
<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտներ</b>		495,162
Արժեթղթերի առք ու վաճառքից ստացված զուտ վնաս		(12,482)
Չուտ եկամուտ փոխարժեքային տարբերությունների գծով	6	193,351
Այլ եկամուտ	7	<u>491,997</u>
<b>Գործառնական եկամուտ</b>		2,121,379
Արժեգրկումից կորուստներ	8	(268,142)
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(912,850)
Այլ ծախսեր		<u>(81,393)</u>
<b>Գործառնական ծախսեր</b>		(1,262,385)
<b>Շահույթ նախքան հարկումը</b>		858,994
Շահութահարկի գծով ծախս	10	<u>(204,117)</u>
<b>Չուտ շահույթ</b>		<u>654,877</u>

4-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Բանկի Վարչության կողմից 2004թ. հունիսի 1-ին:



Մանվել Սահակյան  
 Գլխավոր հաշվապահ 

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի  
 ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող  
 ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	<u>2003թ. հազ. դրամ</u>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>		
Դրամական միջոցներ		2,250,820
ՀՀ Կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	11	2,094,485
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	12	1,675,712
Հետադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	13	205,730
Վարկեր հաճախորդներին	14	11,231,281
Ներդրումներ	15	1,711,377
Այլ ակտիվներ	16	567,808
Հիմնական միջոցներ	17	1,645,479
Ոչ նյութական ակտիվներ	18	81,508
Հետաձգված հարկային ակտիվ	22	<u>6,012</u>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<u><u>21,470,212</u></u>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>		
Բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից ներգրավված միջոցներ	19	1,997,309
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	20	15,502,062
Այլ պարտավորություններ	21	<u>369,714</u>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<u><u>17,869,085</u></u>
<b>Սեփական կապիտալ</b>		
Բաժնետիրական կապիտալ	23	2,946,250
Չբաշխված շահույթ		<u>654,877</u>
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<u><u>3,601,127</u></u>
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<u><u>21,470,212</u></u>
Պոտենցիալ պարտավորություններ և պայմանական դեպքեր	25,26,27	

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

		<b>2003թ.</b>
	Ծնթգ.	<b>հազ. դրամ</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>		
Ստացված տոկոսներ, վարձավճարներ և կոմիսիոն վճարներ		1,676,321
Վճարված տոկոսներ, վարձավճարներ և կոմիսիոն վճարներ		(205,484)
Չուտ հոսքեր արտարժույթային գործառնությունների գծով		254,952
Այլ եկամուտ		450,530
Այլ ծախսեր		(74,766)
Ընդհանուր և վարչական ծախսեր		<u>(749,498)</u>
		1,352,055
<b>Գործառնական ակտիվների/պարտավորությունների (աճ)/նվազում</b>		
ՀՀ Կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ		(52,576)
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ		(34,659)
Հետադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		(205,000)
Վարկեր հաճախորդներին		(6,958,960)
Այլ ակտիվներ		(37,890)
Բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից ներգրավված միջոցներ		673,466
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		6,549,757
Այլ պարտավորություններ		<u>23,447</u>
		1,309,640
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		
Ներդրումների զուտ ձեռք բերում		(570,957)
Գործառնությունների ձեռք բերում, առանց ձեռք բերված դրամական միջոցների	36	2,191,347
Հիմնական միջոցների զուտ ձեռք բերում		<u>130,142</u>
		1,750,532
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>		
Հոսքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից		<u>2,946,250</u>
		2,946,250
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ</b>		6,006,422
Փոխանակման փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(61,601)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		<u>-</u>
		-
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	30	<u>5,944,821</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**«Արդշինհիմնատրանկ» ՓԲԸ**  
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
 2003թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տաս ամիս ժամանակաշրջանի համար

	<b>Սովորական բաժնետիրական կապիտալ հազ. դրամ</b>	<b>Չբաշխված շահույթ հազ. դրամ</b>	<b>Ընդամենը հազ. դրամ</b>
<b>Մնացորդը առ 1 հունվարի 2003թ.</b>	-	-	-
Թողարկված բաժնետոմսեր	2,946,250	-	2,946,250
Ժամանակաշրջանի զուտ շահույթ	-	654,877	654,877
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2003թ.</b>	<u>2,946,250</u>	<u>654,877</u>	<u>3,601,127</u>

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## 1 Նախապատմություն

### ա) Հիմնական գործունեությունը

«Արդշինհնվեստբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն և բանկային գործունեության լիցենզիա է ստացել 2003թ. մարտին: Բանկի հիմնական գործունեությունն ավանդների ներգրավումն է, վարկերի տրամադրումը և արժեթղթերով, ոսկու բանկային ստանդարտացված ձուլակտորներով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ»): Հայաստանի Հանրապետությունում Բանկն իր գործունեությունն իրականացնում է գլխամասային գրասենյակի և 61 մասնաճյուղերի միջոցով: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում: Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 475:

Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները ներկայացված են ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 29-ում:

### բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությունը կապված է ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ներկայացված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա տնտեսական իրավիճակի հնարավոր ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2 Պատրաստման հիմքը

### ա) Համապատասխանելիություն

Հաշվապահական հաշվառման իր գրանցումները Բանկը վարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման այդ գրանցումների հիման վրա և ըստ անհրաժեշտության ճշգրտվել են՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի («ՀՀՄՄԽ») կողմից հրատարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՄ») պահանջներին և ՀՀՄՄԽ-ի Հաշվետվությունների մեկնաբանման միջազգային հանձնաժողովի կողմից հրատարակված մեկնաբանություններին համապատասխանելու նպատակով:

### բ) Չափման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ամացյալ ֆինանսական գործիքների, առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի հիման վրա, բացառությամբ այն ակտիվների և պարտավորությունների, որոնց իրական արժեքի վստահելի չափումը հնարավոր չէ: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացված են ամորտիզացված կամ սկզբնական արժեքով:

**զ) Չափման և ներկայացման արժույթը**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Որպես չափման արժույթ Բանկի ղեկավարությունը սահմանել է դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Դրամը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

**դ) Անընդհատություն**

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, որն ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում: Բանկի ակտիվների փոխհատուցվելիության, ինչպես նաև Բանկի ապագա գործունեության վրա կարող են էական ազդեցություն ունենալ ներկա և ապագա տնտեսական միջավայրերը (տես ծանոթագրություն 1 (բ)): Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են պահանջվել, եթե Բանկն անկարող լինի շարունակել իր գործունեությունն անընդհատության սկզբունքից ելնելով:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

**ա) Գործարքներ արտարժույթով**

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան չափման արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ փոխարկվում են չափման արժույթի այդ ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքներով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Սկզբնական արժեքով ներկայացված արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով:

**բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Բանկի կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցները և ՀՀ ԿԸ-ում ու թղթակից բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները:

**գ) Ֆինանսական գործիքներ**

**(i) Դասակարգում**

*Առևտրային նպատակներով պահվող գործիքներն* այն գործիքներն են, որոնք Բանկի կողմից հիմնականում պահվում են կարճաժամկետ շահույթ ստանալու նպատակով: Այս գործիքները ներառում են ներդրումները և ածանցյալ պայմանագրերը, որոնք նախատեսված չեն և չեն հանդիսանում արդյունավետ հեջավորման գործիքներ, ինչպես նաև ֆինանսական գործիքների կարճաժամկետ վաճառքից առաջացած պարտավորությունները: Չուտ ստացվելիք դիրք (դրական իրական արժեք) ունեցող բոլոր առևտրական ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները ներկայացվում են որպես ակտիվ: Չուտ վճարվելիք դիրք (բացասական իրական արժեք) ունեցող բոլոր առևտրական ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

*Տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերն* այն փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապահին (դեբիտորին) դրամ տրամադրելու միջոցով, բացառությամբ նրանց, որոնք տրամադրվում են կարճաժամկետ շահույթ ստանալու մտադրությամբ: Տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են բանկերին և հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ, սակայն չեն ներառում ձեռք բերված վարկերը:

*Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները* ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը:

*Վաճառքի համար մատչելի ակտիվները* ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն պահվում առևտրական նպատակներով, տրամադրված չեն Բանկի կողմից կամ չեն պահվում մինչև մարման ժամկետը:

**(ii) Ճանաչում**

Բանկը ճանաչում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքները և վաճառքի համար մատչելի ակտիվները այն ամսաթվի դրությամբ, երբ պարտավորվում է ձեռք բերել այդ ակտիվները:

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները, տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերը ճանաչվում են Բանկին փոխանցման կամ Բանկի կողմից տրամադրման օրը:

**(iii) Չափում**

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում սկզբնական արժեքով, ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի բոլոր գործիքները չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Այդ գործիքները ներկայացված են ձեռք բերման գնով, ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, հանած արժեզրկումից կորուստը:

Բոլոր ոչ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները, տրամադրված փոխառությունները (վարկերը), դեբիտորական պարտքերը և մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**(iv) Իրական արժեքի չափման սկզբունքներ**

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց մվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը, երբ հնարավոր է, որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Ձեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում, դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են ղեկավարության գնահատականի վրա, իսկ զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնային մոդելների կիրառման դեպքում, մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Զգնանշվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Բանկը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու համար՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

**(v) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս**

Բոլոր առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

**(vi) Ապաճանաչում**

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ Բանկը կորցնում է վերահսկողությունը այդ ակտիվը կազմող պայմանագրային իրավունքների նկատմամբ: Սա տեղի է ունենում, երբ իրավունքները իրացվում են, նրանց ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է կամ կազմակերպությունը հրաժարվում է այդ իրավունքներից: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է:

Վաճառքի դեպքում վաճառքի համար մատչելի և առևտրական նպատակներով պահվող ակտիվներն ապաճանաչվում են, և գնորդից ստացվելիք գումարները ճանաչվում են այն օրվա դրությամբ, երբ Բանկը պարտավորվում է վաճառել այդ ակտիվները: Ապաճանաչման գծով շահույթը և վնասը որոշելու համար Բանկն օգտագործում է առանձնահատուկ բացահայտման մեթոդը:

Մինչև մարման ժամկետը պահվող գործիքները, տրամադրված փոխառությունները (վարկերը) և դեբիտորական պարտքերը ապաճանաչվում են այն օրը, երբ փոխանցվում են Բանկի կողմից:

**դ) Հետզնման և հետադարձ հետզնման պայմանագրեր**

Հետզնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը պահվում են առևտրական նպատակներով պահվող արժեթղթերի կամ վաճառքի համար մատչելի արժեթղթերի պայուսակներում և հաշվառվում են համապատասխանաբար: Հետզնմելու պարտավորությունը գրանցելու համար օգտագործվում են պարտավորությունների հաշիվները: Վաճառքի և հետզնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հետզնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Հետադարձ հետզնման պայմանագրերով պահվող արժեթղթերը գրանցվում են որպես ստացվելիք գումարներ: Գնման և վաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հետադարձ հետզնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Հետադարձ հետզնման պայմանագրի գծով ստացվելիք գումարները ներկայացվում են զուտ արժեքով՝ հաշվի առնելով արժեզրկման գծով պահուստը:

**ե) Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

**զ) Հիմնական միջոցներ**

**(i) Սեփական ակտիվներ**

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են ձեռք բերման արժեքով հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սեփական ուժերով կառուցված ակտիվի սկզբնական արժեքը ներառում է նյութերի ձեռք բերման արժեքը, աշխատուժի ծախսումները և արտադրական վերադիր ծախսերի համապատասխան մասը:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող հիմնական բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

**(ii) Վարձակալված ակտիվներ**

Այն վարձակալությունը, որի դեպքում Բանկին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված սարքավորումները ներկայացված են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով, հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Գործառնական վարձակալությունը, որի դեպքում Բանկին չեն փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, ծախսագրվում է:

**(iii) Մաշվածություն**

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջինս ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

Օգտակար ծառայության սահմանված ժամկետները հետևյալն են՝

Շենքեր	20 տարի
Համակարգիչներ	3 տարի
Տնտեսական գույք	5 տարի
Կապիտալ ներդրումներ վարձակալված միջոցներում	10 տարի
Այլ ակտիվներ	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի

**է) Ոչ նյութական ակտիվներ**

**(i) Գուղվիլ**

Չեղբերումների հետևանքով առաջացող գուղվիլն իրենից ներկայացնում է ձեռք բերման արժեքի այն մասը, որը գերազանցում է ձեռք բերված գուտ որոշելի ակտիվների իրական արժեքը: Գուղվիլը ներկայացվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

**(ii) Ոչ նյութական ակտիվներ**

Բանկի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

**(iii) Ամորտիզացիա**

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության սահմանված ժամկետները հետևյալն են՝

Գուղվիլ	10 տարի
Համակարգչային ծրագրեր	10 տարի

**ը) Արժեզրկում**

Բանկի ակտիվների, բացառությամբ հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվները կարող են արժեզրկված լինել: Այդպիսի հայտանիշի գոյության դեպքում ակտիվների փոխհատուցվող գումարները գնահատվում են:

**(i) Փոխհատուցվող գումարի հաշվարկ**

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերում Բանկի ներդրումների և դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքով, որը զեղչվում է ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի Բանկի ներդրումների փոխհատուցվող գումարը դրանց իրական արժեքն է:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է նրանց վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնով: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից զգալիորեն անկախ դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը:

**(ii) Արժեզրկումից կորուստի հակադարձում**

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի կամ դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն դեպքում, երբ փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձություններին:

Այլ ակտիվների գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել է փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատականները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը ցածր է այն հաշվեկշռային արժեքից, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

**թ) Տոկոսաբեր փոխառություններ**

Տոկոսաբեր փոխառություններն ի սկզբանե ճանաչվում են սկզբնական արժեքով, ներառյալ գործարքների հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո տոկոսաբեր փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, և արժեքի ու մարման արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է փոխառության ժամկետի ընթացքում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Երբ փոխառությունները հետ են գնվում կամ մարվում են մինչև ժամկետի ավարտը, մարված գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերությունը ճանաչվում է անմիջապես ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

**ժ) Բաժնետիրական կապիտալ**

**(i) Բաժնետիրական կապիտալի հետ գնում**

Երբ որպես սեփական կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված փոխհատուցումը, ներառյալ ուղղակի վերագրելի ծախսերը, ճանաչվում է որպես սեփական կապիտալի նվազում:

**(ii) Շահաբաժիններ**

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ-ի կանոններով ու կանոնակարգերով և ՀՀ օրենսդրության պահանջներով:

Հայտարարվելուց հետո սովորական բաժնետոմսերի շահաբաժինները ճանաչվում են որպես չբաշխված շահույթի բաշխում:

**ի) Հարկեր**

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է, կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով օգտագործվող արժեքների ժամանակավոր տարբերությունների վրա: Ժամանակավոր տարբերություններ չեն սահմանվում հարկման նպատակով չնվազեցվող գույվիլի և հաշվապահական հաշվառման կամ հարկվող շահույթի վրա ազդեցություն չունեցող ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար: Հետաձգված հարկերի գումարը կախված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող ձևից՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ուժի մեջ կամ ըստ էության ուժի մեջ գտնվող հարկման դրույքները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հնարավոր է օգտագործել հետագայում հարկվող շահույթի դիմաց ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

**լ) Տոկոսային եկամուտ**

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես՝ հաշվի առնելով ակտիվի արդյունավետ եկամտաբերությունը կամ կիրառելի լողացող տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են զեղչի, հավելավճարի կամ տոկոսաբեր գործիքի սկզբնական ընթացիկ արժեքի և մարման ենթակա գումարի միջև տարբերությունների ամորտիզացիան, որը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա:

**խ) Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ**

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները ճանաչվում են համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

**ծ) Արժեթղթերի առք ու վաճառքից ստացված գուտ եկամուտ**

Առք ու վաճառքից ստացված գուտ եկամուտը ներառում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, վաճառքի համար մատչելի արժեթղթերի օտարումից և իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը:

#### 4 Չուտ տոկոսային եկամուտ

	<b>2003թ. հազ. դրամ</b>
<b>Տոկոսային եկամուտ</b>	
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	21,750
Վարկեր հաճախորդներին	1,127,185
Հետադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	11,276
Արժեթղթեր	103,598
	1,263,809
<b>Տոկոսային ծախս</b>	
Բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից ներգրավված միջոցներ	12,436
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	2,271
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	295,751
	310,458

#### 5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ

	<b>2003թ. հազ. դրամ</b>
Կոմիսիոն վճարներ կանխիկացման գծով	300,338
Վճարային գործարքներ	176,636
Երաշխիքների գծով վճարներ	10,983
Այլ	36,678
	524,635

#### 6 Չուտ եկամուտ փոխարժեքային տարբերությունների գծով

	<b>2003թ. հազ. դրամ</b>
Շահույթ սփոթ գործարքներից	254,952
Վնաս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(61,601)
	193,351

#### 7 Այլ եկամուտ

	<b>2003թ. հազ. դրամ</b>
Դուրս գրված վարկերի վերականգնում	300,895
Ստացված տուգանքներ	146,697
Շահույթ հիմնական միջոցների օտարումից	41,467
Դուրս գրված այլ ակտիվների վերականգնում	100
Այլ	2,838
	491,997

## 8 Արժեզրկումից կորուստներ

	<b>2003թ. հազ. դրամ</b>
<b>Չուտ կորուստներ արժեզրկումից</b>	
Հաճախորդներին վարկեր (տես ծանոթագրություն 14)	129,168
Այլ ակտիվներ (տես ծանոթագրություն 16)	105,792
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ (տես ծանոթագրություն 12)	12,125
Արտահաշվեկշռային հոդվածներ (տես ծանոթագրություն 21)	21,057
	268,142

## 9 Ընդհանուր վարչական ծախսեր

	<b>2003թ. հազ. դրամ</b>
Աշխատակիցների հատուցումներ	384,817
Մասնագիտական ծառայություններ	102,636
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	77,375
Մաշվածություն և ամորտիզացիա	73,332
Վարձակալություն	57,846
Գովազդ և շուկայավարում	52,766
Հաղորդակցության և տեղեկատվական ծառայություններ	43,795
Աշխատավարձին վերաբերող հարկեր	33,263
Անվտանգություն	29,887
Գործուղման ծախսեր	19,330
Վերանորոգման և պահպանման ծառայություններ	14,037
Գրասենյակային ծախսեր	4,894
Այլ	18,872
	912,850

## 10 Շահութահարկի գծով ծախս

	<b>2003թ. հազ. դրամ</b>
<i>Ընթացիկ հարկային ծախս</i>	
Ընթացիկ տարի	213,276
	213,276
<i>Հետաձգված հարկային ծախս</i>	
Ժամանակավոր տարբերությունների առաջացում	(6,012)
Ձեռք բերմանը վերաբերող ժամանակավոր տարբերությունների հակադարձում	(3,147)
	(9,159)
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ընդամենը ծախսեր	204,117
Բանկին կիրառելի հարկային դրույքը կազմում է 20%:	

Արդյունավետ հարկային դրույքի համադրում`

	<b>2003թ. հազ. դրամ</b>	<b>%</b>
Շահույթ նախքան հարկումը	858,994	
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	171,799	20.0
Չնվագեցվող ծախսեր և չհարկվող եկամուտներ	22,809	2.7
Փոփոխություն չճանաչված հետաձգված հարկային ակտիվներում	2,017	0.2
Չեռք բերման պահին ճանաչված հարկվող եկամտի ազդեցություն	7,492	0.9
	204,117	23.8

## 11 ՀՀ Կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

	<b>2003թ. հազ. դրամ</b>
Նվազագույն պարտադիր պահուստ	1,005,179
Նոստրո հաշիվներ	1,088,220
Հաշվեգրված տոկոսներ	1,086
	2,094,485

Նվազագույն պարտադիր պահուստը պարտադիր ավանդ է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն: Այս պահուստից միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն մեծությունը չպահպանելու դեպքում, Բանկի նկատմամբ կիրառվում են տուգանքներ, և Բանկը սովորաբար գերծ է մնում նման գործողություններ կատարելուց: ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստի հանդեպ կիրառվում է տարեկան 3% դրույքաչափ:

Նոստրո հաշիվներում ներառված է 52,576 հազար դրամ գումար, որը ստեղծվել է ՀՀ ԿԲ-ի կողմից բանկային քարտերի հաշիվների դիմաց:

## 12 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

	<b>2003թ. հազ. դրամ</b>
Նոստրո հաշիվներ	1,687,837
Արժեզրկման գծով պահուստ	(12,125)
	1,675,712

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերում տեղաբաշխված միջոցները ներառում էին 34,659 հազար դրամ գումարը, որը գրավադրված էր որպես ակրեդիտիվների գծով պարտավորությունները մարելու երաշխիք:

### **Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում**

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 838,962 հազար դրամ և 431,747 հազար դրամ գումարով երկու բանկերում տեղաբաշխված միջոցներն առանձին գերազանցում էին բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը:

**Արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծություն**

	<b>2003թ. հազ. դրամ</b>
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբին	-
Ժամանակաշրջանի գուտ ծախս	12,125
Մնացորդը ժամանակաշրջանի վերջին	12,125

**13 Հետադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ**

	<b>2003թ. հազ. դրամ</b>
Բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից ստացվելիք գումարներ	205,000
Հաշվեզրված տոկոսներ	730
	205,730

**Գրավ**

Հետադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված արժեթղթերի վերաբերյալ ղեկավարության գնահատականը մոտավորապես հավասար է այդ պայմանագրերի գծով ստացվելիք գումարների արժեքին:

**14 Վարկեր հաճախորդներին**

**Վարկային պայուսակի վերլուծություն աշխարհագրական առումով և ըստ տնտեսության ճյուղերի**

